

Արարի՝ «Գերբնական հիւանդութիւն», Թիֆլիս, 1903, գին է 20 կոպ.
Արարի՝ «Մըրազան ժամեն», Թիֆլիս, 1904, գինը 20 կոպ.

Բանաստեղծական երկու փորձեր են, որ պ. Արարի առանձին հրատարակութեամբ դնում է գրական քննադատութեան առաջ: Դրանցից առաջնը՝ «Դերբնական հիւանդութիւն» մեր կարծիքով նոր սկսող բանաստեղծի համար մի վերին աստիճանի խիզախ փորձ է: Գեղարուատի իւրաքանչիւր ճիւղի մէջ նոր խօսք ասելու ցանկութիւնը միշտ մի առանձին հմայք ունի, բայց միևնույն ժամանակ դաւադիր հմայք: Պ. Արարի, ըստ երեսյթին, կամեցել է նոր խօսքով սկսել, ասել «մի բան», որ դեռ չի ասուել, երգել «ցնորքներ» որոնք անծանօթ են եղել իր նախորդներին: Ցանդուն ու գեղեցիկ ցանկութիւն. մարդկային հոգու թոփշքին մկ կարող է սանձ դնել: Տարարախտարար երիտասարդ բանաստեղծի այդ փորձը չի կարելի յաջողուած համարել: Նրա «Դերբնական հիւանդութիւն»-ը բանաստեղծական սիրուն կտորներ, մի քանի յաջող պատկերներ ունի, բայց իրեւ ամրողջութիւն՝ առանձին բան չի ներկայացնում: Այդ փոքրիկ պօէմայի Փարուղան էլ վերին աստիճանի միամիտ է: Մասիսի կատարին կանգնած բանաստեղծը, որ փիլմուփայութիւններ է անում սիրոյ մասին և կանչում իր մօտ Արաբսի ափի դիցուհուն, որպէսզի յետոյ նրա հետ աշխարհ գնան նոր խօսք ասելու, իրեւ ալեբգորիա ոչ ինքնատիպ է և ոչ խորը:

Պ. Արարիի «Փիլմուփայական» մտքերը նոր չեն և իզուր նա այնքան բառեր է կուտակել իրար վրայ և սակաւաթիւ յաջողուած պատկերների, զգացմոնքների պարզութիւնն ու գեղեցկութիւնը եղծել: Օրիգինալ լինելու ցանկութիւնը պ. Արարիին դարձել է շատախօս, մինչև այն աստիճան, որ երբեմն միայն բառեր են շարուած առանց դադափարական բռվանդակութեան, երբեմն էլ ենթադրուած բովանդակութեան հետ կատարեալ հակասութիւն են ներկայացնում: Ահա օրինակ նրա պօէմայի սկիզբը, որ բաւական բնորոշ է:

Ալյնքան չէր զգացուել իմ թախծոտ հոգին.

Կարծես իմ ամբողջ էութիւնն իսպառ

Անշօշափելի նիւթ էր օդային.

Թեթև. սիւքի պէս, թեթև ծովերի

Ճերմակ, փաղփաղուն փրփուրի նման»:

Հինգ երկար տողեր և որքան բառեր՝ ասելու համար, թէ նա ինըն իրան զգում է եթերացած՝ սիւքի և ծովի փրփու-

րի նման։ Մենք վճռապէս անկարող ենք հասկանալ, թէ առաջին տողը ի՞նչ կապ ունի մնացածի հետ և ի՞նչ է ուզում ասել, Չորրորդ «թեթևա-ը», եթէ «փրփուրին» է վերաբերում (որ շատ հաւանական է) այն ժամանակ սա հայերէն չէ, այլ մի աբսուրդ։

Երբեմն էլ նա այնպիսի պարբերութիւններ ունի, որոնք չէ թէ բանաստեղծութեան, այլ սովորական արձակի մէջ անգամ անտանելի են բայերի և գերանունների անվերջ կրկնութիւններով։

«Ու Աստուածային գեղեցկութիւնը
Մենք ճանաչում ենք սոսկ այն ժամանակ՝
Երբ թափանցում ենք մենք մէկի հոգին
Եւ ճանաչում ենք նորան լիովին։
Երբ մենք փշում ենք սրտի կողակեքը...»

Այսպէս կարելի է անվերջ շարունակել, բայց դա բանաստեղծութիւն չի լինի, այլ բայերի ներկայի խոնարհում։ Աստուածային գեղեցկութիւնը այդ «ենք»-երով անկարելի կը լինի ճանաչել եթէ բանաստեղծական լեզուն երաժշտութիւն է, ապա պ. Արարին լաւ նուազող չէ։

«...Ահա վիթխարի լեռներ.
Զով վերջալուսի ճաճանչների տակ
Փալիլում են ուժգին, և սրբանուէր
Արեգակն, ինչպէս անբիծ լոյս-հրեշտակ՝
Ժպտում է նըրանց հուրհուրատելով, (?)
Փարում, փաղաքշում է իր վառ շողերով։»

Ահա մի պատկեր, որ կարող էր շատ գեղեցիկ լինել, եթէ պարոնը չկուտակէր մի շարք աւելորդ ածականներ, կամ եթէ նրանց տեղ աւելի պատշաճ բառեր դնէր։ Բայց պ. Արարին, ինչպէս ասացինք, բանաստեղծութիւնը հասկանում է անհամապատասխան բառերի առատութիւն և արդիւնքը լինում է ողբալի։ Նրա պօէման՝ ծայրէ իծայր արուեստի կողմից չափազանց աղքատ է, բացակայում են արտաքինի և ներքինի նըրբութիւնները, երանցները, ամեն ինչ ասուած է անօգուտ չափազանցութիւններով և վերին աստիճանի բիրտ ձևով։ Կարդալին՝ մարդ կարծես քայլում է մի այնպիսի խորդ ու բորդ ճանապարհով, ուր ամեն ըոպէ կարելի է քիթ ու գլուխ փշել։

Տեղ տեղ նա միայն ունի յաջող բանաստեղծական նկարագիրներ, որոնք թէև դարձեալ անարուեստ են, բայց կարդացում են հաճոյքով և վկայում են հեղինակի ճաշակը։

«... Այն մութ-կանաչ թաւիշն անպատճառ
Թաւ անտառներն են շքեղաղալար, —

Թուկս ու շիկագոյն շղարշը գեղանի
Հասկերն են մատաղ գարու, ցրենի...
Եւ հիանում եմ թախծոտ հրճուանքով.

Կարծես վիթխարի
Այդ տեսարանը հզօր հանճարի
Վրձինով քաշած մի վսեմափառ
Գործ է գերազանց....»

Բայց այսպիսի համեմատարար յաջող կտորները շատ քիչ
են, իսկ ամբողջը մի խակ, անտաշ գրուածքի տպաւորութիւն է
գործում:

Պ. Արարին մի առանձին թուլութիւն ունի մանաւանդ
դէպի ածականները, որոնք, տարաբախտաբար, միշտ ի չարն է
գործ զնում: Լեզուի և զգացմունքի նրբութիւնը թէ ուժգնոււ-
թիւնը նա փնդրում է ոչ թէ համապատասխան արտայայտու-
թիւնների, այլ շատ մակրայների և ածականների մէջ: Եւ ահա
ստացուել են այսպիսի դարձուածքներ, «Աէդ տիեզեր», «Խը-
րոխտագին լեռներ», «Խրոխտ դարեր», «Աէդ մտքեր», «Ոժխեմ
թախիծ», ևայլն:

Երբեմն էլ, ինչպէս ասացինք, նա գեղեցիկ բառերի շարքեր
ունի, որոնք միայն բառեր են, օրինակ՝

«Մեզ ձոնուած բախտի ժպիտը սիրավառ», «Վեհ, խելօք
եմ ես», «Ծնորք-դիցուեին ևալիս»:

Կասկած չկայ, որ պ. Արարի լաւ հայերէն չգիտէ, իսկ
առանց լեզուի հիմնաւոր գիտութեան, առանց գեղեցիկ ձևի,
բանաստեղծութիւնը մի անկարելիութիւն է:

Տեղ տեղ պ. Արարին բացագանչութիւններ ունի, որոնք
որքան և խրոխտ են, (գուցէ և լաւ են հնչում իր ականջին),
նոյնքան աւելի փոքրացնում են նրան և ընթերցողի մէջ յա-
րուցանում մի վերին աստիճանի անախորժ զգացմունք: Մե-
ծամտութիւնը ինքնըստինքեան միշտ խոտելի է, բայց երբ նա
գոնէ միացած չէ զօրութեան, անպայման կարողութեան հետ,
դառնում է նողկալի: «Վեհ, խելօք եմ ես». Եսո թագաւոր եմ
վեհ, հսկայական գաղափարների, վառ ձգտումների: Հաւատա-
ցած ենք, որ պ. Արարի կ'ազատուէր այդ անխորհուրդ և պըս-
տիկացնող բացագանչութիւններից, եթէ լայն մտաւոր պատ-
րաստութիւն ձեռք բերէր, որ առ այժմ նրան սաստիկ պակա-
սում է:

Մենք քիչ բայ ասացինք հեղինակի պօէմայի բովանդա-
կութեան, իդէական կողմի մասին, որովհետեւ որպէս առաջին
փորձ, կ'ուզէինք պահանջող չկինել: Զենք կարող չնկատել սա-
կայն, որ ընաւ չի հասկացում, թէ նա իր յաւերժահարսի հետ

Մասիսի կատարից դէպի աշխարհ դիմելով՝ ի՞նչ մի առանձին նոր գաղափարներ պիտի քարոզի, որ իրաւունք ունենայ ինքն իրան անուանել «վեհ խելօք»։ Դիմելով յաւերժահարսին, նա ասում է.

«Գնանք աշխարհը, գնանք միասին,
Շշմեցնենք նրան մեր զգացմունքերով,
Ասարատ հոգով, մեր սէդ մոքերով։

Եւ վերջի վերջոյ չի պարզում, թէ ի՞նչ են այդ զգացմունքները, սէդ մոքերը, որոնցով աշխարհը պէտք է շշմի։ Յամենայն դէպս, աւելի լաւ կը լինէր շշմած աշխարհը ուշքի բերել, թէ չէ, առանց պ. Արարիի էլ նրան շշմեցնողներ շատ կան։

«Գերբնական հիւանդութիւնը» պ. Արարիի առաջին բանաստեղծական փորձն է, թերութիւնները բանականապէս բազմաթիւ են. այնուամենայնիւ, նա ընդունակութիւններ է ցոյց տալիս այս փոքրիկ երկի մէջ, որ յուսանք ապագայում աւելի հարուստ, աւելի բազմակողմանի և բեղմնաւոր կը դառնան։

Անցնենք այժմ նրա երկրորդ փորձին՝ «Սրբազն ժամեր»-ին։

Մի տարի է բաժանում իրարից երիտասարդ հեղինակի այս երկու գրական փորձերը։ Անշուշտ պ. Արարիի գրական դիմագծութիւնը ձևակերպելու, նրա ուրոցն անհատականութիւնը բնորոշելու համար, այդ ժամանակը շատ չնշին է։ Եւ արդարեւ նա այստեղ էլ նոյնն է համարեա, ինչ որ իր առաջին փորձում Շատ բառեր, քիչ միտք, երբեմն ոչ մի հետաքրքիր, գրաւիչ իդէա։ Մի բան պարզ է, նա անհանգիստ երևակայութիւն ունի, որ խարիսխակելով աշխատում է իր ճանապարհը գոտնել բայց մոլորուած է։ Զգացմունք կայ, որ տակաւին իր արտայատութեան իսկական գեղեցիկ ձևերը չի գտել։

Ինչ որ «ցնորքներ» ունի, խնդուկ ցնորքներ. ինչ որ «փէրիներ» է տեսնում շարունակ, ձանձրալի փէրիներ, որոնք յայտնուում են ամեն տեղ, և ալիքների վրայ, և գետի ափին, և «գիշեր ժամին, լուսնակ ժամին» և ցերեկով։ Բանաստեղծը շարունակ խօսում է նրանց հետ, նրանց մասին, մանաւասդ իր մասին և այդ բոլորը, այնուամենայնիւ, տարտամ, անորոշ, անհաստատ, վերջ ի վերջոյ նա համարեա ոչինչ չի ասում իր «փէրիներով» ու «ցնորքներով»։

«Մենք հպարտ ծովի ալիքն ենք կայտառ,
Երբեմն խաղաղ երազում ենք մենք...»

Երբեմն ապստամբ մենք չունենք դադար,
Ու իսելացնոր աղմկում ենք մենք...

Ինչպէս չի զգացել պ. Արարին, որ այդ «ենք»-երն ու «մենք»-երը կարգալի չեն, իսկ իբրև պատկեր՝ այդ կտորը այնքան գեղեցիկ էլ չեն:

Շարունակ երգելով «փոթորիկների աղջիկ», «փրփուր հագած փէրի», բնական էր մտածել, որ պ. Արարին իր երազները, իր իդէալներն է դրել մի երևակայական, զեղեցիկ արարածի մէջ, որին պաշտում է, որին փնդրում է ծովերի և փոթորիկների մէջ: Դա կը լինէր իրօք մի բանաստեղծական պատկեր: Բայց կարգալով նրա «Ծովի եղերքին» ոտանաւորը, մենք ցաւով համոզուեցինք, որ «ցնորժներ», «ոսկի երազներ» երգող «խիզախ տղան» մի ամենաբանալ զգացմունք է ատածում դէպի իր իդէալը:

«Իմ կինը եղիք... թռչնիկն անզին» աղերսում է պ. Արարին իր «փրփուր հագած սքանչելի փերուն», «փոթորիկների ըմբոստ աղջկան»: Թող ների պ. Արարին, բայց այդ «Իմ կինը եղիք»-ը չափազանց գուհիկ է: Եթէ փէրին, ինչպէս ասացինք, մի այլաբանութիւն է, ապա սեռական զգացմունքի մասին խօսք լինել չի կարող. Եթէ նա մի սիրուած աղջկայ հեռաւոր պատկեր է, ապա զարմանալ կարելի է, որ առաջին ըլնքոյց, մաքուր սէրը այդ աստիճան ըիրտ արտայայտութիւն է ստանում երիտասարդ բանաստեղծի շրթունքներում:

Դա սէր չեն, այլ տգեղ կիրք, որ առանց պ. Արարին էլ բաւական երգուում է Արևելքի փողոցներում:

Այս տեսրակի քսան և երկու ոտանաւորների մէջ շատ քչերն են յաջողուած: Համարեա բոլորի մէջ պակասում է որևէ հետաքրքիր, գրաւիչ իդէա. «ցնորք», «երազ», «հէքիաթ», «փէրի»—և ոչ մէկը կարող են իդէա ներկայացնել, երբ նրանք գործ են ածուում հէնց այնպէս: Այդ նոյն թերութիւնն է, որ նկատուում է պ. Արարին առաջին փորձի մէջ: Զգացմունքի գեղեցկութիւնն ու ուժգնութիւնը նրա գաղափարականութեան մէջ է և ոչ թէ անիմաստ բառերի:

Գիշեր ժամին, լուսնակ ժամին

Գետն է կամաց քչազում.

Կախարդ ժամին, գաղտնի ժամին

Գետն է անուշ կարկաչում...

Գետի միջից գուրս է գալիս

Մի աննման նազ- փէրի

Հազին փրփուր շողշողալիս՝

Մի սիրունիկ լալ-փէրի...

Եետոյ այդ փէրին երգում է. գալիս է մի գեղանի
պատահի, անխօս նստում է գետի եղերքին և լուռմ է երգը.
բայց քունը տանում է և երազում տեսնում է դարձեալ մի
կոյս, մի դիցուհի իր մօտ նստած: Պ. Արարին շարունակ փէրի,
չընաղ կոյս, դիցուհի է երեակայում, և ինչպէս տեսանք, նրանց,
կին առնելու համար: Սյօթանը չափազանց քիչ է ընթերցողին ո-
գուրելու համար և, որ գիխաւորն է, ոչ միայն նոր խօսք չէ,
ալ բաւականչն անհամ է:

Պ. Արարտին շատ սիրում է կրկնութիւններ, ոչ իբրև յանեկը (refrain) այլ հէնց այնպէս, ուր պատահի:

«Ես թաղել եմ կրծքիս տակ»

Իմ սէլն անուշ ու անբիծ...

Ես թաղել եմ կրծքիս տակ

Իմ սէլն անուշ ու անբիծ...

Սա նրա մի ոտանաւորի առաջին տունն է. նոյնպէս է կազմուած և երկրորդ տունը. Այսպէս կարելի է շարունակել անվերջ. բայց դա տգեղ է և ոչ մի շնորթ չի ցոյց տալիս:

Այս բոլորից յետոյ կարծում ենք ներողամիտ ժպտով մի-
այն կարելի է կարդալ երիտասարդ հեղինակի հետևեալ տո-
ղերը.

«Զգտիր զէպի ինձ, ձգտիր անդադար խղճալի աշխարհ, Զգտիր անընդհատ, վագիր անընդհատ, հասիր եմ եսուեց»

Ես մարգարէ եմ. երջանիկ կեանքի թովող պատմաբան.» «Օ՛, պատմե՛ռ ուռ ինձ. ճ. սեհե՞ր առ Խօն Ռուս Ռ

Զոտիր անընդհատ, վասիր անընդհատ, համարել

Անմիտ, անխորհուրդ և տօնեա տռոկու

Անմիտ, անխորհուրդ և տօելո տռոեկա...

Ինչու համար աշխարհը վազի Պ. Արարիի յետևից, այդ
մենք հասկանալ չկարողացանք. ինքն ասում է, որովհետև՝ «Ես
մարգարէ եմ». բայց այդ էլ չտեսանք. մարգարէական ո-
չինչ չկայ Նրա երկու տասնեակ երգերի մէջ. Պ. Արարին ունի.
Գուցէ գրելու փոքրիկ շնորք, որ կարօտ է մշակութեան,
կարօտ է մանաւանդ բազմակողմանի, լայն մտաւոր զարգացման:
Մարգարէները, տեսնողները տարաբախտաբար խիստ դանդաղ
են ծնուռմ այս խեղճ աշխարհում, և երբ «նոր խօսք» են ա-
սում, մարդիկ ուզեն չուզեն նրա յետևից գնում են: Խոկ դուք
պ. Արարի, առ այժմ սովորեցէք. ձեր «մարգարէութինը» կը
տեսնենք յետոյ: Յաջողուած կարելի է համարել հեղինակի եր-
գերից «Ես իմ վիշտը ընդմիշտ տուի ահեղ քամու հոսանքին»

«Ե՞նչ կը լինէր»-ը և «Ժպիտաը վառ»-ը. իսկ որպէս բնութեանը պատկեր՝ «Փոթորիկը ծովի վրայց»:

«Սրբազն ժամերում»-ի մէջ էլ հեղինակի լեզուն նոյն թերութիւններն ունի, ինչ առաջին փորձի մէջ։ «Ես թափառում եմ սիրուց զժահար»։ «գոռան-գոչէն ալիք», «գեղ յուշ», «գեղ եղբ», «կուտարգ» ևայլն։ Օրինակները բազմաթիւ են։ Կրկնում ենք պ. Արարին շնորհք ունի, բայց նա շատ է աշխատում անպատճառ օրիգինալ լինել, բայց այդ նրան չի յաջողւում և նա երբեմն նոյնիսկ համսում է արագուրդի, թէ մաքով և թէ լեզուով։ Հարկաւոր է սովորել ընդհանրապէս, աւելի լայն մըտաւոր պատրաստութիւն ձեռք բերել և մանաւանդ հայերէնը մշակել, գեղեցիկ ձևերի ճաշակը զարգացնել։ Եւ յետոյ... մի փոքր համեստութիւն։

Ա. Ահարոննեան

ՆՈՐ ՄՏԱՑՈՒԱԾ ԳՐԹԵՐ

- 1) Ե. Թոփիեանի՝ 1965 թ. «Լոյս» պատկերազարդ օրացոյց հանդէս, գինն 1 ր. 20 կուգ.։
- 2) 1905 «Ընդարձակ օրացոյց Ա. Փրկչեան Հիւանդանոցի հայոց», Կ. Պոլիս, գին 10 դրշ.։
- 3) Գաբ. Սունդուկեանցի՝ «Պէտօ» կատակ. 3 արար. երրորդ տպագ. ուղղած Թիֆլիս 1904. գ. 50 կ։
- 4) Օ. Շրայնէրի՝ «Անուրջներ» թարգմ. հրատ. Ատրպետի, Թաւրիդ 1904. գ. 15 կ։
- 5) Յ. Դաղբաշեանի՝ «Լիակատար Բառարան Հայերէնից Ռուսերէն», Ա. պրակ. Թիֆլիս 1904. բաժանորդագինն է 2 ր. 50 կ։
- 6) Մուշեղ վարդապետի՝ «Դրուագներ», հրատ. Նշան-Պապիկեանի Կ. Պոլիս. 1994. գ. 7½ դրուշ.։
- 7) Զապել Հ. Ասատուրի՝ «Ճուկեր» Քերթուածները, հրատ. Նշան-Պապիկեանի, Կ. Պոլիս, 1904 գ. 5 դրուշ.։
- 8) Մ. Ա. Պարսամեանի՝ «Անրջանք» Քերթուածներ, հրատ. Նշան-Կարապետեանի. Կ. Պոլիս 1904. գ. 5 դրուշ.։